

[2]

1 Եւ իբրեւ աւուրս բազումս անդէն ի նմին դեգերեր³, յարուցեալ այնուհետեւ հասաներ⁴ առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց, որոյ անունն ճանաչեր⁵ Սահակ, զոր պատրաստական գտաներ նմին փութոյ հաւանեալ⁶: 2 Եւ միանգամայն յաւժարութեամբ գումարեալ հանդերձ աղաւթիւք մեծաւք⁷ առ Աստուած⁸ կանխէին, վասն ամենայն ոգւոց⁹ քրիստոսաբեր փրկութեան¹⁰ հասանելոյն: 3 Եւ զայն առնէին աւուրս բազումս:

4 Ապա ելաներ նոցա պարգեւական¹¹ յամենաբարին¹² Աստուծոյ ժողովել¹³ զաշխարհահոգ խորհուրդն¹⁴ երանելի միաբանելոցն, եւ ի գիւտ¹⁵ նշանագրաց¹⁶ Հայաստան ազգին հասանել:

5 Բազում¹⁷ հարցափորձի¹⁸ եւ քննութեան¹⁹ զանձինս պարապեցուցեալ եւ բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա եւ զկանխագոյն խնդրելին իւրեանց թագաւորին Հայոց²⁰, որոյ անուն²¹ կոչէր Վռամշապուհ²²:

6 Յայնժամ պատմեր նոցա արքայն վասն առն ուրումն²³ ասորոյ²⁴ եւ պիսկոպոսի ազնուականի՝ Դանիել անուն կոչեցելոյ, որոյ յանկարծ ուրեմն գտեալ²⁵ նշանագիրս աղփաբետաց¹ հայերէն լեզուի²: 7 Եւ իբրեւ պատմե-

1 *Ճա Ճր* որպէս

2 *Ճա Ճր չիք* արդեօք

3 *Ճա Ճր* իբրեւ բազում անգամ ի նմին դադարէր

4 *ճ չիք* հասաներ

5 *Ճա Ճր* ճանաչիր

6 *b* հաւանեալ տոյն. մանաւանդ հաւանեալ / *Ճա Ճր* հաւանեալ: Որ մանաւանդ միաբանեալ եւ միաանական

7 *Ճա Ճր* մեծաւք / *միւսն*. մեծովք

8 *Ճա Ճր* մեծաւք եւ ուժգին խնդրուածովք առ Աստուած

9 *b* որդոց / *cd* հոգւոց

10 *Ճա Ճր* փրկութեան

11 *c* պարգեւ / *Ճա Ճր* պարգեւական պատճառք

12 *c* յամենաբարւոյն

13 *Ճա Ճր* ժողովեալ

14 *Ճա Ճր* խորհուրդսն

15 *abcde* զգիրս *փիւ*. ի գիւտ

16 *abde* զնշանագրոյ / *c* նշանագրաց տալ / *Ճա Ճր* նշանագրացն

17 *Ճա Ճր* սահմանեալ բազում

18 *Ճա Ճր* հարցափորձի / *միւսն*. հարց փորձի

19 *b* եւ քննութիւնն

20 *Ճա Ճր* իւրեանց թագաւորին իւրեանց հայոց

21 *e* անունն

22 *Ճա Ճր* կոչիր Վռամշապուհ

23 *b* որում / *Ճա* որումն *փիւ*. ուրումն

24 *Ճա e* ասորոյ

25 *c լուս*. եր գրեալ / *միւսն*. *չիք* գրեալ. *ուղղում եմ*՝ գտեալ